

Արձանագրություն N 6

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
Կառավարման խորհրդի 2016թ. հուլիսի 27-ի նիստի
(Կոմիտաս 49/2)

Ներկա էին՝

խորհրդի նախագահ՝ Արծվիկ Մինասյանը:

խորհրդի անդամներ՝ Աշոտ Սեդրակյանը, Հայկ Այվազյանը, Մարիամ Այվազյանը,
Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Աբգար Մկրտչյանը և Միլենա Հակոբյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Արմեն Շահնազարյանը, Տարոն Հակոբյանը,
Ալիսա Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Արմեն Տերտերյանը և Գևորգ Պողոսյանը:

Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգ

1. Քննարկման ենթակա հարցեր՝

Լսեցին՝

1.1 Տեսչական մարմնի 2017 թվականի բյուջեի հաստատում

Զեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Հ.Այվազյանը, Ա. Շահնազարյանը, Ա. Մկրտչյանը, Կ. Սահակյանը և Ա. Երանոսյանը:

Առաջարկվեց՝ քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ բյուջեում նախատեսել ջրախողովակների վերանորոգման, պահակային ծառայության վճարման և փորձանմուշների գնման և փորձարկման համար նախատեսված պետական բյուջեի գումարները ներառել որպես 2017 թվականի տեսչական մարմնի ծրագիր:

Որոշվեց՝ Հաստատել տեսչական մարմնի 2017 թվականի բյուջեն և տեսչական մարմնից կատարված ՀՀ կառավարության կրճատումները:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Լսեցին՝

1.2 Ստուգումների իրականացման ուղեցույցի հաստատում:

Զեկուցող՝ Լևոն Խալիկյան

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Կ.Միրզաբեկյանը, Մ. Այվազյանը և Կ. Սահակյանը:

Առաջարկվեց՝ Ուղեցույցում հնարավորինս կոնկրետացնել ստուգումների շրջանակը: Որոշվեց՝ Հաստատել ուղեցույցը :

Կողմ – 8:

Դեմ – 0:

Լսեցին՝

1.3 Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին:

Զեկուցող՝ Լևոն Խալիկյան:

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Կ.Միրզաբեկյանը, Մ. Այվազյանը և Կ. Սահակյանը:

Որոշվեց՝ Հաստատել փոփոխությունը :

Կողմ – 8:

Դեմ – 0:

Լսեցին՝

1.4 Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի նոր պաշտոնի անձնագիրը հաստատելու և գործող պաշտոնի անձնագրերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Զեկուցող՝ Լևոն Խալիկյան:

Արտահայտվեցին՝ Ա.Մինասյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Կ.Միրզաբեկյանը, Մ. Այվազյանը և Կ. Սահակյանը:

Որոշվեց՝ Հաստատել պաշտոնների թափուր պաշտոնների անձնագրերում իրավագիտություն մասնագիտության ավելացումը և հաստատել պաշտոնի անձնագրերը:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Լսեցին՝

1.5 Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի տարեկան ծրագրի, հաշվետվության ձևի ներկայացում և հաստատում:

Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան

Արտահայտվեցին՝ Կ.Միրզաբեկյանը, Ա.Մինասյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Մ. Հակոբյանը, Լ.Խալիկյանը, Ա.Սարգսյանը:

